Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԵՏ

1. **Պաշտոնի անվանումը**

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության (այսուհետ՝ **Վարչություն**) տնտեսագետ

2. **Ենթակա և հաշվետու է**

Վարչության տնտեսագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

3. **Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Վարչության տնտեսագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս տնտեսագետներից մեկը:

4. **Աշխատանքի բնույթը**

1) Մասնագիտական գիտելիքի և հմտությունների կիրառմամբ՝ մասնակցում է Վարչության ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը.

2) մասնակցում է ոլորտին առնչվող ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներին.

3) իրականացնում է ֆինանսատնտեսական, ֆինանսաբանկային, հաշվապահական, հարկային և ոլորտին առնչվող այլ տեղեկատվության ստուգման, վերլուծությունների իրականացման և հաշվետվությունների կազմման աշխատանքներ.

4) իրականացնում է մշտադիտարկում ոլորտի ռազմավարության և դրա իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրի կատարման, ինչպես նաև՝ ոլորտին առնչվող այլ գործառույթների նկատմամբ.

5) մշտադիտարկման արդյունքում իրականացնում է հաշվետվությունների և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքներ.

6) մշակում և ներկայացնում է ոլորտի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ.

7) մասնագիտական գիտելիքի շրջանակներում ուսումնասիրության ուղղության, ծավալի և մեթոդների, ինչպես նաև ոլորտին առնչվող այլ հանգամանքների վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում Վարչության դատախազներին:

5. **Իրավունքները և պարտականությունները**

Իրավունքները՝

- վերլուծություններ իրականացնելու և հաշվետվություններ կազմելու համար՝

Վարչության պետի թույլտվությամբ ծանոթանալ նյութերին, փաստաթղթերին.

- աշխատանքների կազմակերպման, ծրագրման, կատարման և մասնագիտական աջակցություն տրամադրելու նպատակով՝ Վարչության դատախազներից, տնտեսագետներից և (կամ) Վարչությանն աջակցող բաժնի աշխատակիցներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- ստուգել ներկայացված փաստաթղթերի, տեղեկատվության և նյութերի հավաստիությունը.
- մասնակցել ոլորտային քաղաքականության վերաբերյալ միջազգային և տեղական մակարդակներում կազմակերպվող միջոցառումներին, քննարկումներին, դասընթացներին.
- առաջադրված խնդիրների լուծման նպատակով կատարել հարցումներ, համապատասխան պաշտոնատար անձի (անձանց) հետ կազմակերպել և վարել աշխատանքային և մասնագիտական քննարկումներ.
- իր իրավասություններից բխող հարցերի վերաբերյալ ներկայանալ առաջարկություններով, հաշվետվություններով, վերլուծություններով, ելույթներով, զեկույցներով:

Պարտականությունները՝

- տրամադրել մասնագիտական և մեթոդական աջակցություն Վարչության աշխատանքների իրականացման գործընթացում.
- համապատասխան փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության հիման վրա իրականացնել վերլուծություններ, կազմել հաշվետվություններ.
- միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կազմել տեղեկանքներ և ներկայացնել ոլորտի կատարելագործմանն միտված հիմնավոր առաջարկություններ.
- այլ անձանց չփոխանցել աշխատանքային գործունեության ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները.
- ըստ անհրաժեշտության, Վարչության պետին կամ ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալին ներկայացնել զեկույց իր կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

6. **Կրթությունը**

Բարձրագույն կրթություն ֆինանսների և (կամ) տնտեսագիտության և (կամ) հաշվապահության ոլորտում և (կամ) աուդիտորի որակավորում

7. **Մասնագիտական գիտելիք**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիք

8. **Աշխատանքային ստաժը, աշխատանքային բնագավառում փորձը**

Ֆինանսների վերլուծության և (կամ) աուդիտի և (կամ) հաշվապահության բնագավառում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ

9. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- Ռազմավարական պլանավորում
- Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
- Խնդրի լուծում
- Տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն
- Բարեվարքություն
- Հաշվետվությունների մշակում և ներկայացում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ
- Ժամանակի կառավարում
- Ֆինանսների և ռեսուրսների կառավարում